

ԱՍՈՒՎԱ ԵՐԿԻՐԸ ԵՎ ՁՈՒՅԳ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհում Խալիպասուվա (¹⁰⁰Ha-li-ip-pa-as-su-wa-as)¹ անունով մի երկիր հիշատակված է խեթական Տելպինու թագավորին (մ.թ.ա. 1525–1500թթ.) անհանդստութուն պատճառած այն քաղաքների և երկրների շարքում, որոնք տեղադրվում են Վանա լճի արևմտյան ափից ոչ հեռու²: Այս բաղադրյալ երկրանունը տրոհվում է Խալիպ և Ասուվա մասերի, որոնցից երկրորդը նույնական է Ասուվա երկրանվան հետ³: Մեկ այլ առիթով Ասուվան հիշատակվում է Պալունա (¹⁰⁰Pa-lu-un-na) երկրի հետ⁴, որը հետագա Պալունիքն⁵ է՝ Տարոնի հյուսիսարևմտյան մասը⁶: Ուրեմն, Պալունան և Ասուվան հեռու չէին լինելու միմյանցից, և Վ. Խաչատրյանն իրավամբ դրանք տեղադրում է Հայկական լեռնաշխարհում, Իսուվայից (հետագա Ծոփքը) արևելք ընկած շրջաններում⁷: Դրանով իսկ նա տարբերություն նշան է դնում այս Ասուվայի և նույն անունը կրած փոքրասիական այն երկրի միջև⁸, որը Զ. Գարսթանզեր և Օ. Ռ. Գարնին տեղադրում են հետագա Կապադովկիայից հարավ-արևմուտք ընկած շրջանում, իսկ ավելի լայն առումով համապատասխան է համարվում Փոքր Ասիայի արևմտյան մասը զբաղեցրած հետագա հռոմեական Ասիա պրովինցիային⁹: Ըստ երևույթին, հայկական Ասուվան փոքրասիականից տարբերելու համար խեթերը սրանցից առաջինը կոչել են նաև Խալիպ-Ասուվա: Այս անվան Խալիպ բաղադրիչն է, մեր կարծիքով, պահպանել Բիթլիսի շրջանի Խալիբի կոչված գյուղը¹⁰:

1 Keilschrifturkunden aus Boghazkoi (Staatliche Museum zu Berlin, Vorderasiatische Abt.), (այսուհետև՝ KUB), Hf. 1-30, Berlin, 1923–1939, XI, 1, III, տող 6:

2 KUB, XI, 1, III, տող 1-7. В. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики). Ереван, 1971, с. 126.

3 В. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 125–127:

4 KUB, XXXIV, 43,1, տող 8,10.

5 В. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 124:

6 Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 76:

7 В. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 123–124:

8 Նույն տեղում, էջ 121–123:

9 J. Garstang and O. R. Gurney. The Geography of the Hittite Empire. London, 1959, p. 104–108, О. Р. Г е р н и. Хетты. М., 1987, с. 37, 52, 53.

10 Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս. Մ Ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա Ր Ս Ե Ղ յ ա ն. Հաստատանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. Հ. II, Երևան, 1988, էջ 624:

Խեթական թագավոր Տուղխալիա II-ի (մ.թ.ա. 1460–1440 թթ.) Տարեգրության¹¹ միջոցով պարզվում է, որ նրա նախորդ թույլ գահակալների՝ ժամանակ Ասուվա երկրի 30 հազարանոց բանակը գրավել էր հարևան Խասուվա երկիրը¹³: Դրան հաջորդել էր Տուղխալիա II-ի բանակի ներխուժումը Ասուվա: Պարտության մատենելով ասուվացիներին, խեթական թագավորը գերեվարել էր ավելի քան տասը հազար զինվորների (հետևակ և կառավարտիկ), ավարի վերցրել ձիեր և մարտակառքեր: Գերեվարվածները մեջ էին նաև Ասուվայի երկու առաջնորդները՝ Պիյախնարան և Կուկուլին¹⁴: Այն ենթադրությունը, թե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե Հայկական լեռնաշխարհում, այլ Փոքր Ասիայի արևմտյան մասում գտնվող Ասուվային¹⁵, չի հաստատվում: Բանն այն է, որ զգալիորեն ստանալուց հետո գերիները և ավարի վերադարձը պահանջող Կուկուլին սպանվել է Ասուվայում, երբ Տուղխալիա II-ը վերանվաճում էր հարևան Խասուվան¹⁶, այն նույն երկիրը, որը նախապես գրավվել էր Ասուվայի կողմից¹⁷: Իսկ վերջինս նույնպես գտնվում էր Հայկական լեռնաշխարհում և Ասուվայի հետ տեղադրվում էր Պալունայից արևելք¹⁸:

Վ. Խաչատրյանը նկատել է տալիս, որ Ասուվան հայտնի է եղել իր ձիերով և, ըստ այսմ, նրա խեթական Asuua(Asu-wa) անվան հիմքում տեսնում է պատկերագիր լուվիերեն asuua «ձի» բառը¹⁹, իսկ անվանակիր երկիրը նույնացնում դարձյալ «ձիական» անուն կրող հետագա Երիվարք/Երեւարքի հետ, նշելով հանդերձ, որ այն ավելի ընդարձակ է եղել, քան V–VII դդ. Երիվարքը²⁰: Բնականաբար, 30 հազարանոց բանակ հանած Ասուվան չէր կարող նույնանալ միայն Ասուվա ցեղային երկրի հետ: Այն

11 Ա. Քոսյան. 1999 թ. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան, 1999, էջ 51, 62: Այս տարեգրությունը մի ժամանակ վերագրում էին Տուղխալիա IV-ին (մ.թ.ա. 1265–1235 թթ.):

12 Տելեպինոսի և Տուղխալի II-ի միջև ավելի քան չորս տասնամյակ գահակալած այդ անձանց անվանացանկն անգամ վերջնականապես ճշտված չի համարվում (Օ. Ք. Գեյբ-հի. Նշվ. աշխ., էջ 26):

13 KUB, XXIII, 14, II, տող 9–10:

14 KUB, XXIII, 11, III, տող 1–3:

15 И. М. Дьяконов. Предыстория армянского народа с 1500 по 500 г. до н.э. Ереван, 1968, с. 113.

16 KUB, XXIII, 11, III, տող 8–10:

17 KUB, XXIII, 14, II, տող 9–10:

18 В. Хачатрян. Նշվ. աշխ., էջ 124:

19 Նույն տեղում, էջ 122 և ծան. 282: Asuua-ի այսպիսի ստուգաբանությունը կարելի է հաստատել նաև միտանի-արիական *asu-«ձի» բառի միջոցով: Հմտ. Asusani (Lu-a-as-su-us-sa-an-ni) «ձիական, ձի վարժեցնող» և հին հնդկ. asva-sani «ձիական, ձիատեր» (Տ. Վ. Գամկրելիձե, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, Тбилиси, 1984, с. 544, 546): Առասպելական մտածողությամբ ժամանակին ձի է ընկալվել նաև տեղի մեծ լեռը: Գ. Սրվանձտյանցը վկայում է. «Սորգի գեղեն անցնելով մի երկար և ձիու կողի ձև ունեցող կապույտ գունով լեռ մը կը տեսնես, այն է Կապուտ-կող» (Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 73):

20 В. Хачатрян. Նշվ. աշխ., էջ 125: Միայն այս դեպքում Ասուվան կարող էր հանել 30.000-անոց բանակ: Նշենք, որ երիպտական և խեթական բանակների միջև տեղի ունեցած Քաղեչի ձակատամարտում (մ.թ.ա. XIV դ. վերջ կամ XIII դ. սկիզբ) խեթական բանակի շարքերում հաշվվում էին նույնչափ զինվորներ (Մ. Գ. Գորգաձե. Ранняя Малая Азия и Хеттское царство. — В кн.: "История древнего мира. Ранняя древность". М., 1989, с. 226):

չատ ավելի ընդարձակ մի ցեղամիություն էր լինելու, արևմուտքում ներառելով Սասնա լեռնաստանը, հարավ-արևմուտքում՝ Բիթլիսի (Բաղեշ) շրջանը, հարավում՝ Մոկքը, իսկ արևելքում՝ Ռչտունիքը: Մասնավորապես գրա կազմում էր գտնվելու Սասնա լեռնաստանի Ասպակունեաց//Ասպակունեաց Ձոր կոչված գավառը, որտեղ գտնվում էին Ասպական գետակը և Ասպականք գյուղը (հետագայի Սպականք//Սպաղանք գյուղը Տալվորիկի ձորում)²¹: Այս անունները ևս հստակ «ձիական» ստուգաբանություն ունեն, որովհետև դրանց ասպ-բաղադրիչը հենց «ձի» է նշանակում (հմտ. պահլավ. asp. ավեստ. aspa «ձի» և իրանական մյուս լեզուների դուգահեռ բառերը)²²: Կարծում ենք, որ նախապես «ձիական» իմաստով են ընկալվել նաև Մոկք նահանգի Իչոց/Իչուց գավառ, Իչայր և Մեւս Իչայր դավառների²³ անունները, որովհետև սրանց հիմքում ընկած հայերեն էլ բառը ծագում է հնգեվրոպական նախալեզվի *ek₁u- արմատից, որից են նաև պատկերագիր լուսվիերեն asua//asua, հին հնգեվրեն asva, հին իրանական aspa, թրակերեն esb- և աղբակից մյուս լեզուների համապատասխան բառերը: Դրանք բոլորն էլ «ձի» են նշանակում²⁴:

Ինչպես ասվեց, Խալիպ-Ասուվա անվան առաջին բաղադրիչին է առնչվում Բիթլիսի շրջանի Խալիբի գյուղի անունը: Վ. Խաչատրյանի կարծիքով, այս նույն բաղադրիչին են առնչվում ինչ-որ մասնագիտություն նշող խեթերեն halipi- բառը, հունարեն χάλυβος//χάλυψ «պողպատ»²⁵ բառը և Արևելապոնտական (Պարխարյան) լեռնաշղթայում բնակված խալյուրների և արմենոխալիբների անունները, որոնց նա վերագրում է «մետաղագործ» իմաստը²⁶: Իսկապես, էսքիլոսը խալյուրներին բնութագրում է «հմուտ երկաթագործ»//σιδηρο-τέκιων բառով²⁷: Ըստ Քսենոփոնի, այս նույն խալյուրների «մեծագույն մասի ապրուստի աղբյուրը երկաթագործությունն էր»²⁸: Խալիպ-Ասուվա անվան առաջին բաղադրիչի այսպիսի ստուգաբանությունը Վ. Խաչատրյանին հիմք է տվել ենթադրելու, որ Ասուվա երկրում գտնված Խալիպ-Ասուվա քաղաքում դրադվել են մետաղամշակություններ, որն այն ժամանակներում կապված էր մարտակառքերի արտագրության հետ²⁹:

21 Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 38, 107:

22 Հ. Հիւրչյան. Հին Հայոց տեղւոյ անունները. Վիեննա, 1901, էջ 307:

23 Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 54, 70, 108:

24 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. I, Երևան, 1973, էջ 270: Հնգեվրոպական նախալեզվի «ձի» նշանակող բառի հայերենում իմաստափոխության «էջ»-ի վերածվելու գործում, ըստ երևույթին, իր դերն է խաղացել այն հանգամանքը, որ Հայկական լեռնաշխարհի տեղական ձիերը, ի տարբերություն ներմուծվող և հատկապես բուծվող խոշորակազմ ձիերի (հմտ. ձի, երիվար, նժույգ), փոքրամարմին էին և վերջիններիս համեմատությանը ավելի շուտ էջեր էին հիշեցնում:

25 Древнегреческо-русский словарь, составил И. X. Дворецкий, т. I—II, М., 1958, с. 1763.

26 В. X а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 127:

27 Древнегреческо-русский словарь, т. II, с. 1472.

28 X e n. Anabasis, V, V, 1 (Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 121).

29 В. X а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 127:

Այս հավանական ենթադրությունը հիմնավորվում է նախ նրանով, որ Հայկական լեռնաշխարհը եղել է բրոնզի մշակումը յուրացրած հնագույն օջախներից մեկը, ապա նրանով, որ Վանա լճից հարավ և հարավարևմուտք ընկած շրջանները ունենին բրոնզի մշակման համար անհրաժեշտ հումքը: Գ. Արվանձտյանցը վկայում է. «Կեցան, Կարկառ և Կարճկան դավառք: Կարճկանը՝ որո գավառագլուխն է Եղեգիս կամ իրեն մերձավոր Ողվանց գեղը, Վանեն հեռի է 18 ժամ: Դիրքը լեռնային է և ձորային. բարձր, ամուր և սուր ժայռեր, խոր և պտուտավոր ձորեր և կիրճեր, անտառոտ, արոտավետ, լեռանց գաղաթը մշտաձյուն: Վան քաղաքի վառելափայտ և ածուխը Կարճկանեն կր բերվեն ամեն տարի նավերով... Այս շղթան շարունակությունն է Մոկաց լեռանց, որ նույնն է ըսել՝ Տավրոսին: Զանազան հանքերով լի՝ կր պատմեն, բայց անհայտ. Կապուտկող լեռը կապարի և երկաթի շտեմարան լինելը այսօր իսկ կցուցնե ղինքը, և Ընձաք գեղի և Ս. Հակոբ վանքի միջև երկաթի մեծ բովատեղի մը ցույց կուտան գեղացիք, պղինձ ևս կա եղեր (ընդգծումները մերն են — Ա. Պ.)»³⁰: Որ հին դարերում այստեղ մետաղ է արդյունահանվել, վկայում է Փավստոս Բուզանդը՝ Հայկական Տավրոսի Վանա լճից հարավ ընկած լեռնաձյունըր կոչելով «Լեռան Երկաթահատացն եւ Կապարահատացն»³¹: Այսպիսով, Ասուվայի գլխավորած ցեղամիությունն ձևավորվել է մարտակառքերով հայտնի լինելու հանգամանքը և Halip-Asuqa տեղանվան «ձիական» ու «մետաղային» ստուգաբանությունը խոսում են Ասուվայի ձիաբուծության և մարտակառքերի արտադրության հայտնի օջախ լինելու մասին, ինչը հաստատվում է տեղում դրանց համար անհրաժեշտ բնակլիմայական պայմանների և օգտակար հանածոների դոյուլթյամբ:

Հաստատված է, որ կառքերի արտադրության առաջին օջախները գտնվել են Մերձավոր Արևելքում: Թ.Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը գրանցից առաջինը համարում են կամ Հյուսիսային Միջագետքի լեռնային շրջանները (Տիգրիսի վերին հոսանքի շրջանները ներառյալ), կամ Անդրկովկասից մինչև Հյուսիսային Միջագետք ձգված մարզը՝ Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող կենտրոնով³²: Հիմնավորումը հետևյալն է. ա) այդպիսի օջախն ունենալու էր ամուր տեսակի փայտանյութով ապահովող հարուստ անտառներ, բ) բրոնզե գործիքների պատրաստմանը կոչված բրոնզի մետալուրգիա, որովհետև այդպիսի փայտանյութի մշակումը առանց անհրաժեշտ բրոնզե գործիքների «անհնար էր կամ ծայրահեղորեն դժվար»³³: Վանա լճից հարավ և հարավարևմուտք ընկած վերոհիշյալ շրջանները բավարարում են առաջադրված պայմանները:

Մեր կարծիքով, բուն Ասուվայի գլխավորությունը մ.թ.ա. XVI–XV. դդ. գոյություն ունեցած և Հայկական Տավրոսի արևելյան կեսի բոլոր ցեղերին ընդգրկած ցեղամիությունը եղել է հմուտ ձիաբուծների և մետաղագործ-կառագործների կողմից ստեղծված վաղպետական տիպի մի այնպիսի

30 Գ. Արվանձտյանց. Երկեր. հ. I, էջ 403–404:

31 «Փալստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց», բնագիրը Ք. Պատկանյանի, Երևան, 1987, Գ, Ժ:

32 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Նշվ. աշխ., էջ 733–734:

33 Նույն տեղում, էջ 733:

կազմավորում, որտեղ իշխանության գլուխ կանգնած են եղել զինվորական և քրմական դասերի վերնախավերի ներկայացուցիչները: Առաջնային դերը պատկանել է զինվորական գասին, որը մ.թ.ա. XV դ. կեսին ներկայացված էր Հանձին վերոհիշյալ Պիլաինարայի, իսկ քրմական դասի ներկայացուցիչ Կուկուլին իր գիրքով Համարվելու էր երկրորդը ցեղամիության մեջ: Պատահաբար չէ, որ Պիլաինարայի անունը հիշատակված է առաջին տեղում, իսկ Կուկուլինը՝ երկրորդ: Բրոնզեդարյան Հայաստանում զինվորական գասի վերնախավը իշխող գիրքի էր հասել ոչ առանց զինված պայքարի: Հայկական Տավրոսի շրջաններում քրմական դասի կողմից առաջնութունը զինվորականին զիջելու պատմական եղելության արձագանքն ենք տեսնում «Սասնա ծռեր» գյուցազնավեպի այն հատվածում, որտեղ պատմվում է ամպրոպային զինվոր Սանասարի և արևային քուրմ Բաղդասարի մենամարտի և նրանց հաշտվելու մասին.

«Ախպե՛ր...իս չգըտցա, որ տու Աստուծմե վոժ ունեք.

Ձի թորա, ալ իս վար քի ծեռ չվըրցիմ:

Իս քու սլստիկ ախպեր, տու իմ ճոչ ախպեր.

Ինչ օր ասիս, իս քի լսիմ»³⁴:

Ասուվան թե՛ նեղ և թե՛ լայն առումով ներկայացնում է Հայկական Տավրոսի հենց այն շրջանները, որտեղ և ծնունդ են առել ու ձևավորվել մեր գյուցազնավեպի «Սանասար և Բաղդասար» ճյուղի վաղագույն օրինակները: Քաջ Հայտնի է, որ «Սասնա ծռերի» առաջին ճյուղի առասպելաբանական հենքը երկվորյակ եղբայրների մասին ըզմաթիվ ազգերի մեջ տարածված առասպելն է: Բայց նա ունի նաև պատմական հենք, որի նախնականը երկու առաջնորդների հնգավորակ սոցիալական ինստիտուտի վերհուշն է՝ պատումների մի մասում համեմատաբար ուշ ենթաշերտ ծառայած Ասորեստանի Աենեքերիմ թագավորի հայրասպան որդիների Հայաստանում ապաստանելու մասին ավանդության համար:

Ասուվայում, անտարակոույս, գոյություն է ունեցել աստվածային երկվորյակների մասին պատմող առասպելը, ըստ որի՝ դրա զույգ առաջնորդներ Պիլաինարան և Կուկուլին ըմբռնվելու էին որպես երկվորյակ աստվածութունների հետ նույնացված այդ աստվածութունների երկրային անձնավորումները: Այդպես ենք կարծում, որովհետև նեղ իմաստով Ասուվան՝ հետագա երիվարքը, ուշ ժամանակների Կարճկան գավառն է Վանա լճի հարավարևմտյան ափին³⁵: «Սասնա ծռերի» պատումներից մեկը լճի հարավային ափին է դնում Սասուն բերդի բնակչության նախահայրերին՝ Կա-

34 Սասնա ծռեր. ժողովրդական վեպ. Հ. Ա., Երևան, 1936, էջ 485: Սուր բախումներով էր ընթացել, բայց ի վերջո նույնպիսի արգյունքի էր հասցրել, պայքարը նաև հին Սպարտայում: Ավանդության համաձայն, Տյունդարևսը Կաստոր և Պրիդեկես երկվորյակների ապագա հայրը, պատանի տարիքում Սպարտայից վտարվել էր իր եղբայր Հիպոկոնդի կողմից: Նա Սպարտա էր վերադարձել այն բանից հետո, երբ Հերակլեսը սպանել էր եղբորը (В. Н. Я р х о. Тиндарей. — В кн.: "Мифы народов мира", т. II, М., 1988, с. 513): Սպարտայի նոր թագավորի Τυνδαρέως անունը «ամպրոպային» բնույթ ունի և ազգակիցն է լատին. tundo «խփել, բախել, մուրճով ծեծել», հայ թունդ (որից՝ թնդիկ), հին հնդկ. tundate «խփել», անգլ. —սաքս. stynatan «հարու տալ» բառերի (В. В. Иванов, В. Н. Топоров. К проблеме лтш. Jumis и балтийского близнечного культа. — "Балто-славянские исследования". М., 1983, с. 171, примеч. 90):

35 Ա. Երևան, նշվ. աշխ., էջ 51:

պուտկողը, որի թագավորն էր տրամադրել դրա առաջին քառասուն տուն բնակիչներին և նորակառույց բերդը կոչել Սանսուն, Սասուն³⁶: Հարավային ափին, Ռչտունիք գավառի Մանակերտ հրվանդանի վրա, Աղթամար կղզու դիմաց գտնվում էր Քառն Մանակերտի ամրոցը³⁷: Դյուցազնավեպի մեկ այլ պատումում Քարմանաճեղք անվամբ այն համարվում է ծովածին երկվորյակների պապի՝ Գագիկ թագավորի նստավայրը, որը «կը թաքավորեր Գավաչի, Խավի Ծորի, Շատախի, Մոկաց, Սպարկերտու, Խիզանի, Կարկառի, Կաճկանի վրա»³⁸: Վանա լճի հարավային ափը, մանավանդ Կարճկանը, միջանկյալ դիրք ունեն «Սասնա ծոերի» երկու հիմնապատումների («Մշո» և «Մոկաց») միջև: Դրանց առթիվ Մ. Աբեղյանը գրում է. «Գիտենք, որ վեպն սկիզբ առնելով Սասունում, պատմվում էր Բաղեչի և Մշո կողմերում, Խլաթ, և ապա Բուլանըխում, որտեղից անցել է գեպի հյուսիս... Մյուս կողմից՝ Շատախի, Ռչտունիքի և Մոկաց կողմերում վեպն ավելի կենդանի է եղել և անցել է Վան՝ կապվելով Մհերի գոան հետ...»³⁹:

Երկու առաջնորդների՝ հնագույն հնգեվրոպացիներին բնորոշ սոցիալական ինստիտուտը, ժառանգված է եղել հնգեվրոպական մի շարք ժողովուրդների կողմից և իր արտացոլումն էր գտել նրանց հասարակական կառույցներում: Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը մասնավորապես մատնանշում են ինչպես «Իլիականի» մեջ բերված, և հունական նավատորմը ղեկավարած քաղաքների և մարզերի կառավարիչների կամ առաջնորդների ամբողջ շարքը⁴⁰, այնպես էլ Սպարտայի⁴¹ և հին գերմանների պետական-հասարակական կառույցների օրինակները⁴²: Հայ-գերմանական ղուգահեռի գեպքում առանձնահատուկ ուշադրություն են արժանի անգլոսաքսերի երկու առաջնորդների կերպարներն ու անունները: Դրանք անգլոսաքսերի ներխուժումը Բրիտանիա գլխավորած Hengist-ը և Horsa-ն են՝ «ձիական» հստակ ստուգաբանությունը անուններով⁴³: Ընդ որում, այդ նույն անուններով նրանց հայրենիքում՝ Շլեզվիգ-Հոլշտայնում, մինչև

36 Սասնա ծոեր. հ. Բ, II մաս, Երևան, 1951, էջ 847, հ. Բ, I մաս, Երևան, 1944, էջ 11–14:

37 Ս. Ե. Բ. Ե. մ. յ. ա. ն., նշվ. աշխ., էջ 89:

38 Սասնա ծոեր, հ. Ա, էջ 1091:

39 Մ. Ա. Բ. Ե. մ. յ. ա. ն. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 328–329:

40 Հ. Ն. Բ. Ե. մ. յ. ա. ն. Պատմություն ինը գրքից, թարգմանությունը հին հունարեն բնագրից՝ Համազասպ Համարձումյանի. Երևան, 1955, էջ 65–72:

41 Հ. Ե. Բ. Ե. մ. յ. ա. ն. Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաչարյանի, Երևան, 1986, էջ 353: Հմտ. նաև Միկենյան հունաստանում բարձրագույն իշխանությունը ներկայացրած wanaka-ի և rawaketa-ի տարբերությունը: Սրանցից առաջինը, ըստ երևույթի, հին քուրմ-արքայի, իսկ երկրորդը՝ զինվոր-արքայի ժառանգորդն էր (A. М о л ч а н о в, В. П. Н е р о з н а к, С. Я. Ш а р ы п к и н. Памятники древнейшей греческой письменности. Введение в микенологию. М., 1988, с. 38–39; Предметно-понятийный словарь греческого языка. Крито-микенский период, Составители: В. П. Казанскене, Н. Н. Казанский, Л., 1986, с. 128):

42 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. նշվ. աշխ., էջ 776–777: Հմտ. նաև Բալթյան երկվորյակ ստավաձուկությունների օրինակը, որոնցից ավագ եղբայրը կրում էր զինվոր-արքային, իսկ կրտսերը՝ քուրմ-արքային բնորոշ ֆունկցիաներ (В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. նշվ. աշխ., էջ 173–174):

43 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. նշվ. աշխ., էջ 553, 777: Հմտ. հին անգլ. hēngest «նժույգ» և hors «նժույգ, ձի» (նույն տեղում, էջ 553):

XIX դ. կոչում էին ծիսական նշանակութամբ «տանիքի ձիուկներին», որոնց հենց ձիերի տեսք էլ տալիս էին⁴⁴:

Մեր դյուցազնավեպի պատումներից մեկը երկվորյակ եղբայրներին վերագրում է «ձիական» ծագում, իսկ նրանց մորը կոչում է «ձիական» ստուգաբանություն ունեցող անունով: Այդ պատումի համաձայն ապագա երկվորյակների ապագա մայրը՝

«Կ'երթա ձիու մը ոտաց տեղ կը գնտնի,
Որ էրկու կուց ջուր կա ինե, կը խմի
Մեկ թամամ, մեկ կիսատ կուց կ'էլնի ջուրն
էլավ էն տեղեն տարձավ՝
Մտավ զենա ուր յոտոտնին մեջ:
Ինն անիս, ինն օր, ինն սրհաթ որ լմնցավ,
Աստված էրկու տղա իտուր Սառան խաթունին:
Ծնված ժամանակ խրեչտակ կուգա, ինոնց անուն կը տնի,
Մեկին Աանասար, մեկին Պաղատասար»⁴⁵:

Ինչպես տեսնում ենք, երկվորյակների մայրն այստեղ կոչվում է Սառան: Անձնանունը կազմված է -ան վերջածանցով սառ/սար արմատից: Վերջինս առկա է նաև հայերեն սարակ «էգ ձի» բառում, որը կազմված է -ակ վերջածանցով⁴⁶: Հնչյունական տեսքով Սառան-ը հարում է հին հնդկական Սարանյու (Saranyu) դիցանավանը: Այս անունն էր կրում հին հնդկների ամենապաշտելի աստվածություններ համարված երկվորյակ Աշվինների մայրը: Առասպելն ասում է, որ Սարանյուն, չհամակրելով իր ամուսին Վիվասվատին, զամբիկի կերպարանք առած փախչում է նրանից⁴⁷, բայց այս վերջինը՝ հովատակ դարձած հասնում է նրան: Ի վերջո ամուսինները հաշտվում են և ծնվում են Աշվինները՝ Նասատյան և Դասարան, որոնց հաճախ կոչում էին «ձիածիններ» և «զամբիկի զավակներ»⁴⁸: Ինչպես տեսանք, Սառան-ը անունն է այն առասպելաբանական կերպարի, որը դյուցազնավեպի ուրիշ պատումներում կոչվում է Ծովինար: Պատահական զուգադիպության արդյունք չեն կարող լինել ինչպես հայ և հնդկ երկվորյակների մայրերի անունների հնչյունական նմանությունը, այնպես էլ նրանց զավակների ձիածիններ լինելու հանդամանքը: Պետք է ենթադրել, որ կամ գործ ունենք միտանիական դարաշրջանի (մ.թ.ա. XVII–XIII դդ.) հայ-հնդարիական սերտ առնչությունների արձագանքի կամ ավելի վաղ ժամանակներից եկած հնդեվրոպական ընդհանուր ժառանգության հետ:

Վերջին տեսանկյունից արժեքավորվում են հայոց և հնդեվրոպական մյուս ժողովուրդների համապատասխան առասպելաբանական պատկերա-

44 Նույն տեղում, էջ 777:

45 Սասնա ծոեր, հ. Ա, էջ 1029:

46 Հ. Ա ճ ա յ ա ն. ՀԱԲ. հ. IV, Երևան, 1979, էջ 184: Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն. «Ամպ/ձի» և «գետ/ձի» առասպելաբանական կապի մի քանի դրսևորումներ. — «ՀՀ ԳԱԱ Նիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ», I, Գյումրի, 1988, էջ 68-69:

47 В. Н. Т о п о р о в. Саранью. — В кн.: "Мифы народов мира", т. II, с. 409.

48 "Мифологический словарь", М., 1991, с. 79.

ցումներում առկա ընդհանրությունները: Մեր երկվորյակների նման «ձիական» անցյալ ունեն կամ հեծյալ աստվածություններ են ոչ միայն հին հնդկական Աշվինները, այլև հին հունական Դիոսկուրները, «ձիական» անուն կրող կելտական էպոնյալ ուղեկից ձիերը⁴⁹, թրակաղակյան Մայր դիցուհին և նրա ուղեկից հեծյալները⁵⁰, «ձիական» անուններ կրող վերոհիշյալ Հենդիստը և Հորսան: Հնդեվրոպական տարրեր ժողովուրդների պատկերադրական ավանդույթներում դիցուհին հաճախ պատկերվում էր աջից ու ձախից մեկական հեծյալների կամ նրանց նախատիպ զույգ ձիերի ուղեկցությամբ: Այսպիսի մի եռյակի կարելի է հանդիպել նաև սկյութա-սարմատական ցեղերի թողած նյութական մշակույթի հուշարձանների վրա⁵¹: Ավելի ուշ նրանք երևան են դալիս արևելասլավոնական և, վերջապես, ռուսական ժողովրդական արվեստի դործերում⁵²: Հնդեվրոպական տարրեր ժողովուրդների պատկերադրություններում զույգ ձիերին երբեմն փոխարինում է երկգլխանի մի ձի (հիշենք երկվորյակների համաստեղություն պատկերումը միջնադարյան մատյաններում՝ մեկ մարմին, բայց երկու գլուխ ունեցող պատանի): Ընդ որում, ձիու զույգ գլուխներից մեկը գտնվում է նրա մարմնի մի ծայրին, մյուսը՝ մարմնի հակադիր ծայրին: Այդ գլուխները դեպի դուրս և հակադիր կողմեր են նայում: Այսպիսի մի պատկեր կա Գեղարքունիքի Բերդի Գլուխ հնավայրից հայտնաբերված կնիքի վրա⁵³: Հայաստանում հայտնաբերված և Բրիտանական թանգարանում պահվող մի արձանիկ պատկերում է նույնպիսի մի ձի և դրան բազմած հերարձակ մի կնոթ⁵⁴: Այն ներկայացնում է ամպրոպային և արևային ձիակերպ երկվորյակներին և նրանց մարդակերպ մորը:

Ամպրոպային և արևային աստվածությունների երկմիասնական ձիակերպ ընկալումն իր նախնական տեսքով ևս արտացոլված է «Սասնա ծռերում»: Սասնա ծռերի չորս սերունդների ձին՝ Քուռկիկ Ջալալին, երկբնույթ գերբնական էակ է: Նախ և առաջ նա կենդանական դրսևորումն է ամպրոպ-հողմային երևույթների: Սանասարի և Բաղդասարի նման նա ևս ծովային ծնունդ ունի, բայց թևավոր է, որովհետև թռչում է դեպի ամպերն ու քամու պես է սլանում, փոթորիկ է հանում, շնչով թշնամիներ կոտորում և այլն⁵⁵: Պատահական չէ, որ Սասնա ծռերը համարվել են ս. Սարգսի փոքրերը, իսկ ինքը՝ սուրբը, կրում է ծուռ մականունը: Այս վերջին հանգամանքները ենթադրել են տալիս, թե ս. Սարգսի ձին ևս առասպելաբանական այն նույն կերպարի մեկ այլ զարգացումն է ներկայացնե-

49 E. Ш т а е р м а н. Эпона. — В кн.: "Мифы народов мира", т. II, с. 664. Հմմտ. գալլ. քրո-«ձի» (Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 544):

50 И. К р у г л и к о в а. Дакия в эпоху римской оккупации. М., 1955, с. 147.

51 Е. К у з ь м и н а. Конь в религии и искусстве саков и скифов. — "Скифы и Сарматы", Киев, 1977, с. 102—109.

52 Б. Р ы б а к о в. Язычество древней Руси. М., 1988, с. 505, 507, 528—530.

53 Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ուելիքուիի երկրի կենտրոնական կիկոպյան ամրոցը. — «Պատմա-բանասիրական հանգես», 1964, №1, էջ 119—132, նկ. 4:

54 E. H e r z f e l d. Iran in the Ancient East. Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston. London—New York, 1941, p. 175, fig. 295 d.

55 Մ. Ա ր Ե Ղ յ ա ն, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 415:

լու, ինչ «Սասնա ծռերի» Քուռկիկ Ջալալին: Ժողովրդական հեքիաթներից մեկում ս. Սարգսի ձին ծովածին և ծովաբնակ է, թշնամու գեմ կռիվ տվող, անգամ՝ առյուծասպան⁵⁶: Ս. Սարգսի շուրջ գոյություն ունեցած ժողովրդական հավատալիքների համաձայն, «նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում, ոտների տրոփյունից աշխարհք թնգում, նիզակի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում»⁵⁷:

Նույն Քուռկիկ Ջալալին նաև արևային բնույթ ունի, որովհետև նա «թռչում է գեպի արևի հրեղեն գունդը, սուզվում ծովի հատակը և, այդպիսով, ամբողջացնում արևի հավերժական պտույտը տիեզերական տարածություններում»⁵⁸: Լոռի Բերդի մ.թ.ա. VII–VI դդ. թվագրվող և քրմի պատկանած դամբարաններից մեկում կիրառված է արևի ու կրակի պաշտամունքների հետ սերտ կապի մեջ գտնվող դիակիզման արարողություն: Այստեղ հայտնաբերված երկու ձիերի կմախքները, իսկ դրանք արևին ձուլված կենդանիներ են⁵⁹, վկայում են այս քրմի և նրա ներկայացրած քրմական դասի կապը արևի և ձիու համաձույլ պաշտամունքի հետ: Ձիու և ձիակառքի պաշտամունքը Արևի աստծու մերձավորարևելյան պաշտամունքի կայուն բաղադրատարրերից մեկն էր⁶⁰: Այս փաստը արձանագրված էր նաև Արտավազդ II-ի (մ.թ.ա. 54–34 թթ) դրամների վրա: Հաստատված է, որ հայոց այս արքան աստվածացված և նույնացված է եղել Արևի աստված Միհրի հետ⁶¹: Նրա դրամների հակառակ երեսին պատկերված ճառագայթաձև լուսապսակով անձնավորությունը հենց Միհրն է, որը արշավող քառաձի մարտակառք է վարում⁶²: Մարտակառքերի գործունեությունից դուրս գալն իր ազդեցությունն էր թողնելու նաև Արևի աստվածների փոխադրամիջոցների վերաբերյալ պատկերացումների վրա: Միհրի վիպական ժառանգորդները՝ «Սասնա ծռերի» Մեծ Մհերը և Փոքր Մհերը կառամարտիկներ չեն, հեծյալներ են:

Ժողովրդական հավատալիքներում հեթանոսական ամպրոպ-հողմի աստվածությունից ժառանգորդ ս. Սարգիսը երբեմն հանդես է գալիս զուգորնկերոջ՝ նույնպես հեծյալ մի սրբի հետ միասին: Այդ դերն հաճախ ստանձնում է ս. Գևորգը: Օրինակ, սրբերի այս զույգին է վերաբերում Սալահունյաց գավառի Այդր լճի մասին ավանդությունը. «Ասում են, թե Սբ. Սարգիսն ու Սբ. Գևորգը հեծած այս լճի մեջ ապրող իրենց ձիերին՝ խելահեղ թափով հասնում են այնտեղ, ուր գլուխ է բարձրացնում և ավերներ է

56 Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. II, Երևան, 1959, էջ 78, 79:

57 Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր. հ. I, Երևան, 1983, էջ 271:

58 Հ. Մ ա ռ տ ի Ր ո ս յ ա ն. Հայաստանի նախնադարյան նշանադրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները. Երևան, 1973, էջ 13:

59 Նույն տեղում, էջ 33, Բ. Բ. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 226–227; Մ. Ի ս ր ա յ Ե լ յ ա ն. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն. Երևան, 1971, էջ 65, 72–73:

60 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 731, 735, ծան.1:

61 Գ. Մ ա Ր Գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 57:

62 К. В. Т р е в е р. Очерки по истории культуры древней Армении. М. – Л., с. 93; Խ. Մ ո Ն Ե ո յ ա ն. Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.). Երևան, 1983, էջ 55, 56:

գործում չարը»⁶³։ Գերբնական հեծյալ զուլգի մասին առասպելաբանական պատկերացումը իր հիմնավորումն էր գտնում մեր նախնիների իրական կյանքում։ Այս առումով հետաքրքրական է հետևյալ փաստը։ «Ուրարտական զորքերում, - գրում է Մ. Ն. Պոգրեբովան, - ներկայացված էին և մարտակառքերը և՛ հեծյալները։ Ուրարտական հեծյալները, որպես կանոն, գործում էին զուլգերով՝ զուլգից մեկը զինված էր նետաղեղով, իսկ մյուսը՝ վահանով և նիզակով»⁶⁴։ Առասպելաբանական մտածողությամբ՝ աղեղնավոր նետաձիգը օժտված էր արևային, իսկ վահանավոր նիզակահարը, սովորաբար, ամպրոպային գծերով։ Հեծյալ երկվորյակների և Ամպրոպի ու Արևի աստվածների կերպարների սերտաճման հիմքերից մեկը ձիու նախնազարյան պաշտամունքը լինելու մասին է խոսում ձիաձի բառին տրված բացատրությունը. «ըստ քերթողաց որոտմունք եւ շանթք իբրեւ յերկվարաց Արամազդայ կամ Արեգական առթեալ»⁶⁵։

Ասվեց, որ Ասուվայի առաջնորդներ Պիյաինարան և Կուկուլին համարվելու էին այն նույն ամպրոպային և արևային երկվորյակ աստվածությունների երկրային անձնավորումները, որոնք որպես առասպելաբանական նախատիպեր ընկած են «Սասնա ծռերի» երկվորյակ եզրայրների՝ Սանասարի և Բազգասարի կերպարների հիմքում։ Ընդ որում, նրանցից առաջինը հիշատակված Պիյաինարան համարվելու էր ավագ երկվորյակի երկրային մարմնավորումը՝ ամպրոպային բնույթի զինվոր-արքա, իսկ երկրորդը հիշատակված Կուկուլին համարվելու էր կրտսեր երկվորյակի երկրային մարմնավորումը՝ արեգակնային գծերով օժտված քուրմ-արքա։ Այս տեսանկյունից նրանք հիշեցնում են ոչ միայն վիպական Սանասարին և Բազգասարին, այլև մ.թ.ա. III դ. պատմական անձնավորություններ հանգիստացած զինվոր-արքա Երվանդ Վերջինին և նրա եղբայր քրմայետ Երվազին։ Ի դեպ, Երվանդին ու Երվազին ևս առասպելական ծնունդ է վերագրվել, իբր թե նրանց մայրը իր զավակներին լույս աշխարհ էր բերել «յանկարգ խառնակութենէ՝ որպէս Պասիփայէ զՄինոտավրոս»⁶⁶։ Պիյաինարայի և Կուկուլիի համապատասխան սոցիալական ֆունկցիաներն ի նկատի առնելով էլ Տուգխալիա IV-ը ազատ էր արձակել և Ասուվա վերադառնալու հնարավորություն տվել ոչ թե զինվոր-արքա Պիյաինարային՝ երկրի զինված ուժերի ղեկավարին, այլ քուրմ-արքա Կուկուլիին՝ երկրի հոգևոր առաջնորդին։ Ասուվայի գլխավորած ցեղամիությունյան առաջնորդներից Պիյաինարայի զինվոր-արքա, իսկ Կուկուլիի քուրմ-արքա չինելու մասին մեր արած ենթադրությունը կարելի է հաստատել նաև նրանց անունների ստուգաբանության միջոցով։

Pijainara անձնանունը մենք բաժանում ենք piia- և -inara բաղադրիչներին։ Անվան առաջին բաղադրիչը առնչվում է հայերեն փքին (<*փիքին)

63 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 86։

64 М. Н. П о г р е б о в а. Иран и Закавказье в раннем железном веке. М., 1977, с.138. Հմմտ. Դիոսկորիդի որպես հեծյալների հովանավոր աստվածներ։

65 Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀԼ). Հ. II, Երևան, 1981, էջ 156, Ս տ. Մ ա լ ի ս ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. Հ. III, Երևան, 1944, էջ 173։

66 Մովսիսի Խորենացու պատմությունը Հայոց. քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, Բ, լ է, Բ, խ։

«նետ» և փայտ բառերին: Սրանց հիմքում հնդեվրոպական նախալեզվի միևնույն արմատն է՝ «երկար, տափակ ձող, տախտակ» իմաստներով⁶⁷: Փքին-ի հիմքում հ.-ե. *spei-«սրածայր, սրածայր փայտ» արմատը տեսնող տեսակետը Հ. Աճառյանը հիմնավոր չի համարում⁶⁸: Բայց հմմտ. հ.-ե. նույն արմատից սերած և հայերեն հիշյալ բառերի նման աճականներով ձևավորված ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. pitu-daru «ծառի տեսակ է», իսթ. ispatar «նիզակ», հռ. fūhta «եղևին», նորվ. spita «ցից, բիր», հին իռլ. ochtach «եղևին», «նիզակ», հուն. πένκτα «եղևին», «սոճի», πῖτος «սոճի»⁶⁹: Բերված բառերի արմատակցությունը հաստատվում է դրանք կրող օբյեկտների իմաստաբանական փոխկապվածություն միջոցով: «Նիզակի ամենահին ձևը, ինչպես այդ նկատվել է Թասմանիա կղզու վայրենիների մեջ, եղել է 2-3 մետր երկարությամբ փայտե ձողը, որի ծայրը սրվել է կրակի վրա այրելով: Հետագայում արգեն կուլտուրայի զարգացումով, փայտե ձողին ամրացնում էին քարի, օբսիդիանի, ոսկրի կամ խեցիի սուր ծայր-լեղվակ»⁷⁰: «Նիզակը նաև պատերազմի խորհրդանիշ էր համարվում... Նախապատմական Հայաստանում նիզակը տիրապետող ու համատարած գենք է եղել՝ սկսած քարեդարյան ժամանակաշրջանից»⁷¹: Ուրեմն, Piia-inara անունը կարող է նշանակել «վիթխարի նիզակ», որովհետև անվան երկրորդ բաղադրիչը ներկայացնում է հայերեն անարի «չափազանց մեծ, անհեթեթ, անճոռնի, վիթխարի» բառի տարբերակը՝ կիրառված նաև նիզակի համար⁷²:

Մեծ նիզակների և դրանց կրողների վերաբերյալ ուշադրավ դիտողություններ են արել հնագետներն ու արևելագետները: Ժակ Մորգանը Լալվարի սարալանջի դամբարանների մեծ մասից հայտնաբերված երկար ու կարճ մեկական նիզակների դոյուլթյունը բացատրում էր նրանով, որ դրանցից կարճն ու թեթևը (փոքրը) կիրառվել է հեռահար հարված, իսկ երկարն ու ծանրը (մեծը) դեմառդեմ հարված հասցնելու համար⁷³: Ի նկատի առնենք, որ կառամարտիկների անփոխարինելի դենքը մերձակա մարտում եղել է մեծ նիզակը: Ինչպես ասվեց, ուրարտական զույգ հեծյալներից մեկը ևս մեծ նիզակ էր կրում: Ասորեստանի թագավոր Ալամանասար

67 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ). Երևան, 1987, էջ 149:

68 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Նշվ. աշխ., էջ 536:

69 Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 631-632, Հ. Ս ու թ ի ա ս յ ա ն. Աճառյանը հայերենում. Երևան, 1986, էջ 232:

70 Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան. Հ. II, Երևան, 1941, էջ 64:

71 Նույն տեղում, էջ 65:

72 ՆՐՀԼ, հ. I, Երևան, 1979, էջ 116: Բերվում է Գրիգոր Մագիստրոսի ավանդած օրինակը ևս՝ «սպառազինեալ անարի նիզակօք»: Գր. Ղափանցյանը մերժելով մեր անարի բառը իրանական anairya «ոչ արիական» ձևից բխեցնող տեսակետը, այն առնչում է իսթերեն innara «ուժ, զորություն, հզորություն» բառին, իսկ նիզակ անարին բացատրում որպես «հզոր նիզակ» (Т р. К а п а н ц я н. Историко-лингвистические работы. Ереван, 1956, с. 345—346): իսթական բառի հ.-ե. նախաձևն է համարվում *aneg-/*Hneg-, որից նաև լուվիերեն annarumni «ուժեղ» և այլն (Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 802): Զենքի տարբեր տեսակներ նշանակող բառերի անձնանվանական կիրառման տեսանկյունից հմմտ. Սլաք, ՎաՀան, Ասպար:

73 Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 66:

III-ի (մ.թ.ա. 859–824 թթ.) Բալավատի պալատի գույնի բարձրաքանդակներում ուրարտական ղինվորները պատկերված են մեծ ու փոքր նիզակներով զինված՝ փաստ, որը հաստատվում է Վանի մոտ գտնվող Թոփրակ-կալեի պեղումների միջոցով⁷⁴: Առավել ուշագրավ են ժամանակին Ուրարտուի կազմում գտնված Բաստամի (հյուսիսարևմտյան Իրանում) պեղումներից հայտնաբերված նիզակի ծայրակալները, որոնք զարմացնում են իրենց մեծ ու թվայնությամբ և ծանրութայնությամբ: Պարզ է, որ գրանք ոչ թե ռազմական, այլ ծիսական նշանակություն են ունեցել և համարվում են ինքնուրույն աստծուն ձեռնարկած պաշտամունքային առարկաներ⁷⁵: Ուրարտական արշավող բանակի առևճից ընթացող կառքի մեջ ցցված նիզակը՝ ինքնուրույն աստծու խորհրդանշան⁷⁶, լինելու էր այդպիսի ծայրակալ ունեցող մեծ նիզակ: Այս տեսանկյունից պակաս հետաքրքրական չէ այն փաստը, որ ինքնուրույն մուսուլմանական տաճարի մուտքի երկու կողմերում գրված է եղել վիթխարի նիզակներ կրող հաղթանգամ անձանց մեկական արձան⁷⁷:

Նիզակի piia - անվանումը և նրա պաշտամունքը լայն տարածում է ունեցել նաև Փոքր Ասիայի հնդեվրոպական ցեղերի միջավայրում: Դրանց հետևանքներն են *piia- բաղադրիչը սլարոնական ու անձնանուն-գահանունների դոյուլթյան փաստերը նաև այստեղ: Այդպիսի անուն էր կրում խեթական արձանագրություններում հիշատակված Պիյամարատուն, որը Մուրսիլի II-ի օրոք (մ.թ.ա. 1345-1315 թթ.) գլխավորում էր Փոքր Ասիայի արևմտյան շրջանների և Եգեյան ծովի կղզիների հակախեթական տրամագրություններ ունեցող ուժերին⁷⁸: Ախիյավայի թագավորը նախ հովանավորում էր նրան, ապա ստիպված էր խեթերի պահանջով ձերբակալել այս «ծովահենին» և հանձնել նրանց⁷⁹: Որ սա եղել է տեղական վերնախավի ներկայացուցիչներից մեկը, պարզվում է, թեկուզև այն հանգամանքից, որ նա հոգեհայրն էր Միլավանգայի (հետագա Միլեթը) կառավարչի⁸⁰: Piia-mar(a)tu/Piia-mar(a)du անվան երկրորդ բաղադրիչը ևս հնդեվրոպական ծագում ունի: Նրա հիմքում հ.-ե. *mr̥d- նախաձևն է, որից է նաև Հայերեն մարտ «կռիվ, պատերազմ» բառը (սրանից էլ՝ մարտիկ, մարտնչել և այլն): Հայերեն բառի ազգակիցներից են հին հնդկ. mrdha «մարտ», ավեստ. marəθ- «ոչնչացնել», լատին. Mars/Martis պատերազմի աստծու անունը և այլն⁸¹: Ուրեմն, Piia-mar(a)tu նշանակում է «նիզակով կռվող» և

74 Նույն տեղում, էջ 67:

75 Петер Кальмейер. Символ Халди. — "Древний Восток", 4, Ереван, 1983, с. 179.

76 И. М. Дьяконов. К вопросу о символе Халди. — "Древний Восток", 4, с. 193.

77 Խ. Սամուելյան. Նշվ. աշխ., էջ 65:

78 Ա. Քոսյան. Խեթական տերությունը և Ախիյավան (Տրոյական պատերազմը). Երևան, 1997, էջ 19-21, 23-24:

79 О. Р. Герни. Նշվ. աշխ., էջ 45-47, И. М. Дьяконов., Предыстория..., с. 112.

80 Ա. Քոսյան. Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 24:

81 Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. II, Երևան, 1973, էջ 289:

իմաստային զուգահեռն է ներկայացնում ծագումով իրանական Տիգրան (<*tig-rāna «տեգով կովող») անվան⁸²:

*Piia- բաղադրիչը պարունակող անունն էր կրում նաև խեթական թագավոր Սուպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1380–1346 թթ) որդիներից մեկը: Հոր օգնությամբ նվաճած Կարքեմիշի (Հյուսիսային Ասորիքում) գահը բարձրանալուց հետո իր խուռիական Sarri-Kusuh անվան փոխարեն նա ընդունել էր Pijāsili գահանունը⁸³: Անվան երկրորդ բաղադրիչը -sil-ը նույնական է լինելու հայերեն սլաք բառի * սիլ - արմատի հետ: Ընդունված կարծիքի համաձայն, «սլաք բառի նախածնն է *սուլ-աք», բայց համտ. հ.-ե. *kel-/*kēl-/*kəl- «ցողուն, կոթուն, նետ» արմատը, որից են նաև հին հնգկ. sala «ձող», salala- «նետի ծայր, փուշ», հուն. κηλον «նետ, նիզակ» միջ. իռլ. cail «նիզակ», celtair «նիզակի ծայր», հին հյուս. hali «բարակ ձողի ծայր», հին պրուս. kelian «նիզակ»⁸⁴: Ըստ այսմ, Piia-sili գահանունը կարելի է հասկանալ որպես «նիզակի սլաք, նիզակատեգ»: Այս գահանունը կրած անձի զինվոր-արքա լինելու տեսանկյունից ավելացնենք, որ Հյուսիսային Ասորիքի մյուս մեծ քաղաքի՝ Հալեպի, գահը բարձրացած Պիյասիլի եղբայր Տելեպինուն նրանց հայրը՝ Սուպիլուլիումա I-ը, ուղղակի «քուրմ» էր կոչում⁸⁵: Ասել է թե՛ Կարքեմիշի գահին բազմած Պիյասիլին համարվել է զինվոր-արքա, իսկ Հալեպի գահին բազմած Տելեպինուն՝ քուրմ-արքա: Ուրեմն, Հյուսիսային Ասորիքում գերագույն իշխանությունը իրար միջև բաժանած այս եղբայրների սոցիալական ֆունկցիաները լինելու էին ճիշտ այնպիսին, ինչպիսին էին Ասուվայի զինվոր-արքա Պիյասիարայինը և քուրմ-արքա Կուկուլիինը:

Ասուվայի երկրորդ առաջնորդի Kūkūli անունը տրոհվում է kuk-//kok- արմատի և -ul- վերջածանցի: Նույն արմատն ենք տեսնում հայերեն կոկոզ «գուշակ, իմաստակ բարձրաջօն» բառում, որից են՝ կոկոզաբան «մեծաբան, գոռոզ բանիլք կակազող իմաստակօրէն», կոկոզանամ «մարգարէանալ, մոլիլ իբր ըմբռնեալ ի հիացումն, վարիլ որպէս գուշակ եւ իմաստակ», «մեծաբանել», կոկոզանք//կոկոզումն «գոռոզութիւն ըստ գուշակաց եւ իմաստակաց, փքացումն, ցոյցք իմաստակութեան», կոկովանք «կոկոզանք,

82 Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին. – «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ», II, Գյումրի, 2000, էջ 60: Տիգրան անունն առաջինը կրած հայոց արքա Տիգրան Երվանդյանը, Աթգահակի դեմ մարտնչում էր և նրան սպանեց նիզակով (Ն ո Ր Ե Ն Կ Գ Ի, Ա, իգ, Ա, իթ):

83 Օ. Ք. Գ Ե Ր Ո Ւ. Նշվ. աշխ., էջ 26-27, ծան.1:

84 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ, հ. IV, էջ 224, Հ. Ա ո ւ ք ի ա ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 218: Pijāsili անունը Piia- և -sil- բաղադրիչների տրոհելու ճշմարտացիությունը կարելի է հաստատել խեթական թագավորների կրած այնպիսի անունների մեջ ևս -sil- բաղադրիչների առանձնացմամբ, ինչպիսիք են Hattusili-ն և Mursili-ն: Ըստ երևույթին, նույն բաղադրիչն է առկա Միտանիի արիական աստվածություններից Mitrasšil-ի և Arunassil//Ur(u)uanassil-ի անուններում: Դրանք հիշատակված են դիցանվանացանկի վերջին մասում և, ինչպես Ն. Բ. Յանկովսկայան է նկատում, չէին կարող լինել արիացիների գլխավոր աստվածներ Միթրան և Վարունան (Н. Б. Я н к о в с к а я. Ашшур, Митанни, Аррапхэ. – В кн.: "История древнего мира. Ранняя древность", М., 1989, с. 197): Բայց դրանք կարող էին լինել Միթրայի և Վարունայի նիզակները (համտ. իսլաբիին խորհրդանշող նիզակի պաշտամունքը) որպես նրանց առարկայական գրսևորումներ:

85 Օ. Ք. Գ Ե Ր Ո Ւ. Նշվ. աշխ., էջ 30:

ցոյցք, պաճուճանք բանից»⁸⁶, «Կոկովտել - ճոխարանել»⁸⁷: Ըստ երևույթի, դրանց բոլորի «Կոկ արմատը նույնական է կոկ «Հարթ, ողորկ», «Հղկված», «կանոնավոր, անսայթաք» բառի հետ, որից՝ կոկել «ողորկել, Հարթել», բայց նաև «գարդարել, պճնել», կոկիկ և կոկլիկ «կոկ, Հարթ, ողորկ», բայց նաև «շենքով, կարգին, կանոնավոր»⁸⁸: Այս վերջին բառն իր կազմութամբ զուգահեռն է ներկայացնում քննարկվող անվան. Հմմտ. Kuk-ul-i և կոկլիկ⁸⁹ կոկ-ուլ-իկ: Դրանց մեջ -ուլ-ը վերջածանց է՝ առկա նաև թաթուլ, կափուլ, փուփուլ և այլ բառերում⁹⁰: Հավանաբար, նույն վերջածանցով է կաղմված խեթերեն ձիաբուծության ձեռնարկի հեղինակ միտանիացի Կիկուլիի անունը (Kik-ul-i)⁹⁰:

Kukuli անվան արմատին, մեր կարծիքով, պետք է առնչվի ոչ միայն Հայերեն կոկ-ը, այլև շումերերեն քսք «թանկագին քար», «մաքուր, փայլուն» բառը: Վերջիններիս միջև լեզվաբանական հնարավոր կապի բացահայտման հարցում ի նկատի ենք առել Գ. Ջահուկյանի ենթադրությունը դրանց ազգակցության վերաբերյալ⁹¹: Կարծում ենք, որ Հայերեն կոկ-ի և շումերերեն քսք-ի միջև առկա հնչյունաբանական կապը խարսխված է քննության առարկա բառերի միևնույն իմաստաբանական-առասպելաբանական հենքի վրա: Նախնադարում դրանք եղել են արևին և դրա անձնավորում աստվածներին տրված մակդիրներ՝ հետագայում փոխանցված դրանց երկրային մարմնավորումներն ըմբռնված քուրմ-արքաներին: Հիշենք մի կողմից աքքադական Արևի և արդարադատության աստված Շամաշի և նրա երկրային մարմնավորումն ըմբռնված օրենսդիր քուրմ-արքա Համմուրայի (մ.թ.ա. 1792–1750 թթ.), իսկ մյուս կողմից՝ նույնպիսի «Հասարակացման» ճանապարհ անցած տէր (<տի-այր) և տիկին (<տի-կին) բառերի օրինակները:

Gug/կոկ արմատի «մաքուր, փայլուն» իմաստների կողքին արևին և Արևի աստծուն վերագրվող «թանկագին քար» իմաստը տարօրինակ չի թվա, եթե ի նկատի առնենք, որ «Արևը, սակայն, սկզբնապես ըմբռնվում է որպես մի լուսավոր քար, ինչպես ցույց է տալիս արեգակ (արեգ և ակն = թանկագին քար)՝ բաղադրյալ բառը: Այդ պատկերացումն է հիշեցնում տարածված ակն ու արեգակ արտահայտությունը, որով բնութագրում են առասպելական «հրեղեն աղջիկներին» վառ գեղեցկությունը»⁹²: Շումերերեն բառի իմաստների համեմատությամբ շատ ավելի բաղմիմաստ է Հայերեն կոկ արմատը, ինչը ցույց է տալիս գրանցից ածանցված բառերի հետևյալ շարքը: Մի կողմից ունենք արեգակի քարեղեն ընկալմանը և դրա ձևին առնչվող կուկէճ (<կուկ-էճ) «քար, որով գանազան իրեր ճզմում

86 ՆՔՀԼ. Հ. I, էջ 1110:

87 Բառգիրք Հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 169:

88 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ, Հ. II, էջ 617, Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. նշվ. աշխ., Հ. II, Երևան, 1944, էջ 458:

89 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ, Հ. II, էջ 562, Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. նշվ. աշխ., Հ. II, էջ 482, Հ. IV, Երևան, 1945, էջ 523, ՀԼՊՆԺ, էջ 356:

90 В. В. С т р у в е. История Древнего Востока. Л., 1941, с. 257.

91 ՀԼՊՆԺ, էջ 452:

92 Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., Հ. է, Երևան, 1975, էջ 40:

են», կոկան (<կոկ-ան) «քար, խիճ, ափի մեծություն կլոր քար», մյուս կողմից ունենք դրա զուտ ձևին առնչվող կոկիկ (<*կոկ-ուկ-իկ) «կլորակ, բոլորակ», կոկոյ (<կոկ-ոյ) «կլոր գնգաձև», «զանազան կլոր իրեր», կոկով (<կոկ-ով) «ընգհանրապես՝ կլորակ, գնգաձև իր», կուկու (<*կուկ-ու) «փոքրիկ բոլորակ հաց...», «ձու», «աչքի բիբ»⁹³ և այլն, իսկ երրորդ կողմից ունենք նույն արեգակի՝ որպես հոգևոր-պաշտամունքային երևույթի, ընկալմանն առնչվող կոկ «լավ, ընտիր»⁹⁴ և հայերենից փոխառյալ քրդերեն kOK «գեղեցիկ, սիրուն, կատարյալ»⁹⁵ բառերը (վերջինս ենթադրում է նույն իմաստների առկայությունը փոխատու կողմում՝ հարավհայկական բարբառներում): Դրանք բոլորը կոկ արմատի ավելի հին իմաստներն են արտացոլում, քան քրմերի հոգևոր-մտավոր գործունեությանը վերաբերող ավելի վերևում բերված նույնարմատ բառերը: Ուրեմն, Kukuli անվան ստուգաբանությունը ևս խոսում է այն կրած անձի՝ Ասուվայի երկրորդ առաջնորդի, արևային բնույթի քուրմ-արքա ըմբռնված լինելու մասին:

Ինչպես տեսանք, հնագույն Ասուվա երկրի զույգ առաջնորդներից մեկի զինվոր-արքա, մյուսի քուրմ-արքա լինելու ենթադրությունը հաստատվում է նրանց անունների ստուգաբանության միջոցով: Այս առթիվ ավելացնենք, որ չնայած անձնանունների սոցիալականությունը խորքային երևույթ է, շատ դեպքերում առաջին հայացքից իրեն չբացահայտող, այսուհանդերձ, ինչպես Վ. Ա. Նիկոնովն է դրում, «Անձնանունները գոյություն ունեն միայն հասարակության մեջ և հասարակության համար, որը և թելադրում է դրանց ընտրությունը, որքան էլ անհատական թվան դրանք», այսինքն՝ «անձնանունը նշանաբան է՝ շեշտելու համար դա կրողի պատկանելությունը այս կամ այն հասարակական շրջապատին»⁹⁶: Եվս մեկ, մեր քննարկման առարկան դարձած հարցերի պարզաբանման տեսանկյունից ուղենշային դառնալու միտված, մեջբերում: Ս. Հարությունյանը դրում է. «մեր վեպի («Սասնա ծռերի» – Ս. Պ.) հնագույն տարրերը պատմամշակութային կարևոր արժեք ունեն հենց հայ ժողովրդի վաղնջական շրջանի մշակույթի և պատմության տեսանկյունից, համընթաց են և գրեթե համաժամանակակից հայ ժողովրդի կազմավորմանը և նրա հետագա պատմական զարգացմանը»⁹⁷:

Ի մի բերելով վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղամիություններից մեկը՝ Ասուվան, լինելով Պիյաինարա ու Կուկուլի առաջնորդների զույգի հայրենիքը և տարածքով համընկնելով «Սասնա ծռեր» դյուցազնավեպի նախահայրենիքի հետ,

93 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ, հ. II, էջ 617, Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. նշվ. աշխ., հ. II, էջ 458–459, 481–482: Հայերեն և շումերերեն բառերի հետ ինչ-որ հեռավոր կապեր է դրսևորում նաև հունարեն ΚΥΚΛΟΣ (հին արտասանությամբ՝ *կուկլոս) բառը: Նրա մի շարք իմաստներից հիշենք «շրջանակը», «անիվը», «օղակը», «սկավառակը», «աչքը», իսկ ոչ առարկայականներից՝ «տարին» (Древнегреческо-русский словарь, т. I, с. 994): Ընդ որում, «տարի»/«արև», այնպես ինչպես «ամիս»/«լուսին»:

94 Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. նշվ. աշխ., հ. II, էջ 458:

95 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ, հ. II, էջ 617:

96 В. А. Н и к о н о в. Личное имя – социальный знак. – "Глазами этнографов", М., 1982, с. 28 – 29, 38.

97 Սասնա ծռեր. ժողովրդական վեպ, աշխատություններ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 640:

միևնույն ժամանակ եղել է զույգ առաջնորդների հնդեվրոպական սոցիալական ինստիտուտի և նրա հետ սերտորեն կապված հնդեվրոպական ամպրոպային ու արևային երկվորյակ աստվածությունների պաշտամունքի ձևավորման հնագույն օջախներից մեկը:

СТРАНА АСУВА И СОЦИАЛЬНЫЙ ИНСТИТУТ ДВУХ ВОЖДЕЙ

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

Среди мелких стран Армянского нагорья хеттские источники упоминают и страну Асува. Она возглавляла союз племен восточной половины Армянского Тавра и была известна как страна воинов, коней, колесниц и металлургов. Вызывает особый интерес другое название страны – *Халип-Асува*. Первый компонент этого топонима, вероятно, означает "металлург": ср. с одной стороны название села *Халиби* в районе города Битлис (юго-западнее озера Ван), а с другой стороны – этнонимы халюб//халиб и *арменохалиб*, относительно к племенам-металлургам Восточно-Понтийских гор, а также древнегреческое слово *χαλυβος* "сталь". Территория Асувы (в широком ее понимании) охватывала ту часть южной Армении, где родился и оформился эпос "Сасна црер". Известно, что хеттский царь Тудхалия II (1460 – 1440 гг. до н.э.), завоевав Асуву, пленил более 10000 жителей-воинов, в числе которых находились и вожди страны – Пияинара и Кукули. Эти двое напоминают нам Санасара и Багдасара из "Сасна црер". Так как имена этимологизируются на индоевропейской почве, то мы предполагаем, что древнейшая Асува – прародина армянского эпоса, одновременно является важнейшим очагом формирования не только индоевропейского культа божественных близнецов, но и социального института двух вождей.

THE COUNTRY OF ASUVA AND THE SOCIAL INSTITUTE OF TWO LEADERS

SARGIS PETROSYAN

S u m m a r y

Hittite sources mention the name of the country called Asuva among the smaller countries situated on the Armenian upland. It occupied the part of Southern Armenia, where epos "Sasna Tsrer" was born and shaped. It is known that Hittite king Tudkhalia II (1460–1440 B.C.) captured Asuva and over 10000 inhabitant-soldiers were taken as prisoners, among whom there were 2 leaders of the country: Piainara and Kukuli. These 2 names remind us of Sanasar and Baghdasar from "Sasna Tsrer". We assume that the Ancient Asuva was the birthplace of Armenian epos and one of the most important lands of that time where Indo-European cult of godlike twins and Indo-European social Institute of 2 leaders were shaped.